

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶՐԱԶՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## *ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ*

*/2023-2028 /*



ԶՐԱԶՈՐ

-2023-

## Զարգացման ծրագրի բովանդակությունը

|                                                                                                          |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1.Նախաբան.....                                                                                           | 3  |
| 2.Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին-----                                                            | 3  |
| 3.Դպրոցի նկարագիրը.....                                                                                  | 4  |
| 4.Դպրոցի առաքելությունը .....                                                                            | 4  |
| 5.Իրավիճակի նկարագրություն .....                                                                         | 7  |
| 5:1Դպրոցի շենքային պայմանները .....                                                                      | 7  |
| 5:2 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը-----                                                        | 12 |
| 5:3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը-----                                            | 13 |
| 5:4 Կառավարման և խորհրդակցական մարմիններ -----                                                           | 14 |
| 5:5 Աշակերտական համակազմը-----                                                                           | 18 |
| 5:6 Մանկավարժական համակազմ ---                                                                           | 19 |
| 5:7 Համագործակցումը համայնքի, կրթության կառավարման մարմինների և<br>շահառու կազմակերպությունների հետ----- | 21 |
| 5:8 Ուսումնական միջավայրը .....                                                                          | 22 |
| 5:9 Կրթության որակը` ըստ սովորողների ուսումնառության արդյունքների-----                                   | 24 |
| 5:10 Տեխնոլոգիաներ և նորարարություններ-----                                                              | 28 |
| 6. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը,-----                                                                    | 31 |
| 7.Դպրոցում առկա հիմնախնդիրները-----                                                                      | 36 |
| 8. Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները,<br>կատարողները ու կատարման ժամկետը-----      | 37 |
| 9. Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը-----                                                        | 45 |
| 10. Զարգացման ծրագրի հնարավոր ռիսկերը-----                                                               | 46 |
| 11.Ակնկալվող արդյունքները.....                                                                           | 47 |
| 14.Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական<br>ցուցանիշներն ու պահանջները.....       | 49 |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Կրթության ոլորտը կարևորվում է՝ որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ուստի այն պետք է բավարարի յուրաքանչյուրին և հասարակությանն ու պետությանը՝ որպես հավաքական ամբողջություն: Իսկ այդ հավաքական ամբողջության հիմնաքարը դպրոցն է, որը մի վիթխարի ուժ է և որոշում է ժողովուրդների, պետությունների կենսագոյությունն ու ճակատագիրը: Այն կրթադաստիարակչական դարբնոցն է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը: Չարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է:

**ՀՀ Շիրակի մարզի <<Ջրածորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի** սույն զարգացման ծրագիրը (2023-2028թթ.) մշակելիս ղեկավարվել են <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով: Վերոնշյալ հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետը պահանջում է, որ սահմանված կարգով թափուր տեղի համար մրցույթին մասնակցող հավաստագիր ստացած տնօրենի հավակնորդը պետք է ներկայացնի դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԴՃԾ): Ծրագիրը մշակելիս առաջնորդվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022 թ. N 35-Ն հրամանի համապատասխան՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով: ԴՃԾ-ն կազմելու համար հստակ պատկերացնում են դպրոցի առաքելությունը: ,Առաքելություննե այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն ունի շարունակական բնույթ: Առաքելության իրականացման վրա էական ազդեցություն ունեն արտաքին և ներքին գործոնները: Արտաքին գործոնների թվին են պատկանում պետության կրթական քաղաքականության առանձնահատկությունները, սովորողների կրթական կարիքները, համայնքի առանձնահատկությունները և այլն: Ներքին գործոններից են դպրոցի ավանդույթները, մանկավարժական աշխատակազմի փորձը, դպրոցի առկա ռեսուրսները և այլն: ՀՀ հանրակրթական ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակները ու խնդիրները սահմանում է ,Կրթության զարգացման պետական ծրագիրը, որը սովորաբար հաստատվում է հինգ տարի ժամանակաշրջանի համար: Սույն ԴՃԾ-ն մշակելու համար կատարել են հետևյալ հաջորդական քայլերը:

1. ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարել են գործունեության պլանավորում:
2. Մանկավարժության մեջ ընդունված է, որ դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար պետք է բաժանել փուլերի՝

- ա) դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում,
  - բ) ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,
  - գ) ծրագրերի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում:
3. սահմանել են դպրոցի առաքելությունը,
  4. վերլուծել են առկա իրավիճակը, նշել են ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել եղած հիմնախնդիրները
  5. սահմանել են զարգացման հիմնական նպատակներն ու դրանցից բխող խնդիրները,
  6. սահմանել են դպրոցի զարգացման գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
  7. ձևակերպել են ծրագրի ակնկալվող արդյունքները:

*Չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիք.*

*գիտելիքներով զինված մարդը անպարտելի է:*

**Մ. Գորկի**

### **Առաքելությունն է՝**

- ապահովել սովորողների կրթական կարիքներին, հակումներին, ընդունակություններին, կարողունակություններին և նախասիրություններին համապատասխան նախնական միջին կամ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն:
- ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող ուսումնառություն:
- ապահովել ինքնուրույն կյանքի համար շրջանավարտի պատրաստվածությունը՝ որպես միջանկյալ օղակ, պարտադիր հիմնական և մասնագիտական կրթության միջև:

- ապահովել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը,
- ձևավորել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ
- ստեղծել համապատասխան պայմաններ յուրաքանչյուր սովորողի՝ որոշակի ոլորտում ինքնահաստատվելու և հաջողակ դառնալու
- ստեղծել համապատասխան պայմաններ՝ օժտված երեխաների տարբերակված, խորացված ուսուցում կազմակերպելու համար,
- նպաստել համաշխարհային մշակույթին ծանոթ քաղաքացու ձևավորմանը՝ օտար լեզուների խորացված ուսուցման միջոցով.
- ձևավորել ուսումնական, սոցիալ հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայր, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական, վերլուծական մտածողության անհատական ունակությունների զարգացումը,
- ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը՝ կարևորելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները, որտեղ սովորողը իրեն կգգա ազատ, անկաշկանդ ու ապահով:

### Ն ա պ ա տ ա կ ն է՝

- սովորողներին տալ մասնագիտական կողմնորոշում նախնական մասնագիտական կրթություն, ինչը ամրագրված է «Հանրակրթական պետական կրթակարգում»,
- սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով նկարագրված կարողունակությունների ձևավորում
- ապահովել սովորողների կրթական կարիքների բավարարումը՝ ուսուցումը կազմակերպելով սովորողների նախասիրություններին համապատասխան՝ ղեկավարվելով հանրակրթության պետական չափորոշիչներով

### Խ ն դ ի ռ ն ե ռ ն են՝

- հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները, ձևավորել սովորողի անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր,
- 
- կենտրոնացնել առկա ռեսուրսները և առավել արդյունավետ տնօրինել դրանք,

- արդիականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան,
- սովորողների կարողունակությունների զարգացում,
- դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության բարելավում,
- դպրոցի գործունեության գնահատում և ներդպրոցական վերահսկողության բարելավում,
- ուշադրության կենտրոնում պահել սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
- նպաստել ուսուցիչների տարակարգ ձեռք բերելուն:

## **Ս պ ա ս վ ե լ ի ք ա ր դ յ ու ն ք ն ե ր ն են՝**

- սովորողներին մասնագիտական կողմնորոշում տալը,
- քննադատական մտածողություն ունեցող քաղաքացու ձևավորում
- ծառայելով իր նպատակին՝ լինել օրինակելի և մրցունակ դպրոց

Սպասվելիք արդյունքներն ապահովելու համար վճռորոշ եմ համարում դպրոցում առկա, ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքի խթանումը, ընթացիկ վերապատրաստումները, գիտելիքների ստուգման կամավոր ատեստավորման մասնակցելը, հզոր ներուժով երիտասարդ, կրթված և հմուտ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում՝ ապահովելով սերնդափոխության սահուն ընթացք:

## **2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը**

### **Հաստատության շենքային պայմանները**

Դպրոցը Ջրածոր գյուղում գործել է անցած դարի 20-ական թվականներից՝ սկզբում տարրական, այնուհետ 8-ամյա: 1988թ-ի աղետալի երկրաշարժի հետևանքով դպրոցի շենքը դարձել է վթարային և 1988-2003թթ տեղակայվել է վազոն տնակներում:

1991 թվականին դպրոցը դարձավ միջնակարգ:

2003թ-ին դպրոցը վերանվանվեց ՀՀ Շիրակի մարզի <<Ջրածորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ:

Նույն թվականին շահագործման հանձնվեց դպրոցի նոր շենքը, որը կառուցվեց Հայաստանի սոցիալական օգնությունների հիմնադրամի կողմից: Համայնքի անունից ներդրումը կատարել է <<Վարդանանց Ասպետներ և Դուստրեր>> բարեգործական կազմակերպությունը՝ Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա ԱՄՆ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թ. փետրվարի 8-ի թիվ 120-Ա/ք հրամանով դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝ միջնակարգ լրիվ ընդհանուր կրթություն իրականացնելու 25 սովորողների համար, հիմնական ընդհանուր կրթություն իրականացնելու՝ 42 սովորողների համար և տարրական ընդհանուր կրթություն իրականացնելու՝ 33 սովորողների համար:

ՀՀ Շիրակի մարզի ,Ջրածորի միջնակարգ դպրոցե ՊՈԱԿ-ը ,Կրթական Ծրագրերի Կենտրոնե ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի հետ 2012թ.-ի հունիսի 29-ին կնքել է դրամաշնորհի պայմանագիր, որի հիման վրա բացվել է նախակրթարան:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թ. հուլիս 10-ի թիվ 686-Ա/2 հրամանով դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝ նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնելու համար ավագ նախադպրոցական տարիքի 10 սաների համար:

Դպրոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ,Ջրածորի միջնակարգ դպրոցե պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2) հայերեն կրճատ՝ <<Ջրածորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ:

3) ռուսերեն լրիվ՝ <<Джрадзорская средняя школа>> государственная не коммерческая организация:

4) ռուսերեն կրճատ՝ „Джрадзорская средняя школа ГНКО.

5) անգլերեն լրիվ՝ <<Jradzor secundaru school>> State Non Profit Organization of Shirak region Republok of Armenia.

6) անգլերեն կրճատ՝ <<Jradzor secundaru school>> SNPO:

Դպրոցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ջրածորի միջնակարգ դպրոց>> հիմնարկի (վկայականի համարը՝ Բ003388, գրանցման համարը՝ 46.0022) իրավահաջորդը:

- Լիցենզիա՝ հանրակրթական ծրագրի իրականացման՝ Սերիա Ա N 0754, տրված 08.02.2013թ.

Լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ

- Ծրագրի անվանումը՝ միջնակարգ հանրակրթական
- Հաստատության տեսակը՝ միջնակարգ հանրակրթական դպրոց
- Իրականացվող ծրագրերի աստիճանը՝ երրորդ աստիճանի՝ միջնակարգ հանրակրթական
- ՀՎՀՀ՝ 05522841
- Պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ

02. 03. 2018 գրանցման համար՝ 46. 210. 00070

Հ/Հ՝ 900228000130

- դպրոցի շենքը՝ տիպային
- հզորությունը՝ 100 աշակերտ-տեղ
- Հեռ.՝ 093-18-43-05
- Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք Ջրածոր բնակավայր 4փողոց 52շենք
- Վեբ կայք՝ <http://jradzorschoolsite.am/>
- Էլ. փոստ՝ jradzor@schools.am
- Աշխատողներ՝ 22
- Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ
- Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային
- Տնօրեն՝ Հրայր Հարությունյան
- Իրականացնում է միջնակարգ կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:
- Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 2003թ.
- Հարկայնությունը՝ մեկ
- Ջեռուցման եղանակը՝ անհատական
- Առանձնասենյակների թիվը՝ 3



- Լաբորատորիա՝ 1
- Առարկայական սենյակ/կաբինետ՝ 3
- Համակարգչային կաբինետ՝ 1
- Նախնական զինպատրաստության՝ 1
- Ուսուցչանոց 1
- Բացօթյա մարզահրապարակ՝ 1
- Մարզադահլիճ՝ հարմարեցված
- Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է
- Գրադարանի ֆոնդը՝ 2020 կտոր գիրք
- Աշխատողների թիվը՝ 22
- Դասարանների թիվը՝ 10
- Աշակերտների թիվը՝ 20

աշակերտ - համակագիչ հարաբերակցությունը՝ 4 / 1

### **Դպրոցի շենքային պայմանները**

| համար    | Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակը   | Մակերեսը (մ/քառ.) | Ծավալը (մ/խոր.) | Այլ տեղեկություններ |
|----------|----------------------------------------------|----------|-------------------|-----------------|---------------------|
| <b>1</b> | <b>2</b>                                     | <b>3</b> | <b>4</b>          | <b>5</b>        | <b>6</b>            |
|          | Շենք, շինություն                             | 1        | 677               | 2031            |                     |
|          | Առանձնասենյակներ                             | 2        | 55                | 165             |                     |
|          | Դասասենյակ                                   | 5        | 146               | 738             |                     |
|          | Առարկայական լսարաններ                        | 2        | 42                | 126             |                     |
|          | Լաբորատորիաներ                               | 1        | 20                | 60              |                     |
|          | Նիստերի դահլիճ                               | 1        | 101               | 510             | հարմարեցված         |
|          | Գրադարան                                     | 1        | 8                 | 24              |                     |
|          | Ճաշարան                                      | 1        | 26                | 70              |                     |
|          | Հանդերձարան(ներ)                             | 2        | 20,16             | —               | հարմարեցված         |

|  |                                      |     |      |    |                  |
|--|--------------------------------------|-----|------|----|------------------|
|  |                                      | 3   | 22   | 66 |                  |
|  |                                      |     |      |    |                  |
|  | Մարզահրապարակ(ներ)                   | 1   | 936  | —  |                  |
|  | Համակարգիչներ                        | 7   |      |    |                  |
|  | Համակարգչային այլ տեխնիկա            | 4   |      |    |                  |
|  | Հեռախոսներ                           |     |      |    |                  |
|  | Ջեռուցվող տարածքներ                  | 1   | 677  |    |                  |
|  | Ջեռուցման տեսակը                     |     |      |    | <b>անհատական</b> |
|  | Ջեռուցման օբյեկտ                     | 152 |      |    |                  |
|  | Շենքերի ներսի մաքրվող մակերեսներ     | -   | 677  |    |                  |
|  | Շենքերի դրսի մաքրվող մակերեսներ      | -   | 2250 |    |                  |
|  | Սան. հանգույցների մաքրվող մակերեսներ | 3   | 22   |    |                  |
|  |                                      |     |      |    |                  |

Դպրոցը ունի **լաբորատորիա**,որի գույքը 80-ական թվականների Է,բարոյապես և ֆիզիկապես մաշված, ինդիի կա լաբորատորիան Նոր ժամանակակից գույքով և նյութերով համալրելու,ինչպես նաև ժամանակակից համակարգչային համապատասխան տեխնիկայի ձեռք բերման միջոցով ապահովել վիրտուալ փորձերի տեսական և ինտերակտիվ մասը զուգակցելը և արդյունավետ դասերի կազմակերպումը:

Դպրոցը ունի գրադարան,որի ֆոնդը կազմում է 2020 կտոր գրականություն /ուսումնամեթոդական, տեխնիկական, ծրագրային, գեղարվեստական և այլ/:

Հայկական <<Կարմիր Խաչ >> ընկերության կողմից <<Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ>> ծրագրի շրջանակներում գրադարանը համալրվել է ԱՌԿ գրականությամբ՝ ուղղված սովորողների, նրանց ընտանիքների՝ աղետներին դիմակայելուն և արագ արձագանքման կարողությունների զարգացմանը:

Համակարգչային սենյակը համալրված է 3 համակարգիչներով, որոնք չնայած շահագործվում են, բայց արդեն հին են, ձեռք են բերվել 2007թ-ին: Այստեղ խնդիր կա նոր համակարգչային տեխնիկայի ձեռք բերման:

### Հաշվետու ժամանակաշրջանում հաստատության շենք շինության պահպանում և վերանորոգում

2018թ դպրոց - ծնողական խորհուրդ համագործակցության շնորհիվ դպրոցի ազատ սենյակներից մեկը ամբողջությամբ վերանորոգվել և համապատասխան տեսքի է բերվել որպես ճաշարան <<Դպրոցական կայուն սնունդ>> ծրագրի շրջանակներում դպրոցի տարրական դասարանների աշակերտների սնունդը կազմակերպելու համար: Վերանորոգվել և ներկայանալի տեսքի է բերվել նաև խոհանոցը:

2019թ. Վերանորոգվել և ներկայանալի տեսքի են բերվել դպրոցի երեք դասարաններ, կատարվել են պատերի, հատակի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ: Նույն տարում դպրոց համայնք համագործակցության շնորհիվ, համայնքի ներդրումով փոխվել է դպրոցի դռներից մեկը:

2020թ դպրոցի բյուջեի միջոցներով, հաստատության և ծնողական խորհրդի ուժերով վերանորոգվել է հանդիսությունների դահլիճը, միջանցքը և երկու դասարան:

2021թ դպրոցի բյուջեի միջոցներով և ուժերով կատարվել է կտուրի վերանորոգման աշխատանքներ: Ամբողջությամբ փոխվել է մոտ 30 քմ ցինկե թիթեղ: Կատարվել են թիթեղների ամրացման աշխատանքներ:

2022թ Վերանորոգվել է դասարանների հատակը, ինչպես նաև կատարվել է դասարանների և միջանցքի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ: Ամրացվել և վերանորոգվել են ցանկապատի վնասված հատվածները:

2023թ. Կատարվել են դպրոցի պատերի և հատակի վնասված հատվածների մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ դպրոցի ուժերով և միջոցներով համագործակցելով ծնողական խորհրդի և համայնքի հետ:

Այժմ դպրոցը ունի ներկայանալի տեսք և պատրաստ է նոր ուսումնական տարում հավուր պատշաճի կազմակերպել աշակերտների կրթության ու դաստիարակության գործընթացը:

Այստեղ տեղին է նշել,որ սպասվում է Ջրածոր բնակավայրի բնակեցման վայրի փոփոխություն,կապված Կապսի Ջրամբարի շինարարության հետ և սպասվում է դպրոցի նոր շենքի շինարարություն,որը ըստ ծրագրի սկսվելու է 2024թ-ին և ավարտվելու է 2026-27թ-ին:Համապատասխան փաստաթղթերը և գծագրերը,որոնք առկա են ձեռքիս տակ կներկայացնեմ <<Կցվող փաստաթղթեր>> բաժնում:

### **ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԴԴՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետբյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի:Ունենալով քիչ աշակերտական համակազմ դպրոցը չունի այնպիսի բյուջե,որով կարողանա իրականացնել խոշոր ծրագրեր: Բոլոր դեպքերում բյուջեն վերաբաշխվել է այնպես,որ հնարավոր է եղել հոգալ բոլոր կարիքները: Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության յուրաքանչյուր տարվա նախահաշիվը կազմվել է սահմանված կարգով՝ պահպանելով հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջները: Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի /լիազոր մարմին/ կողմից հաստատության յուրաքանչյուր տարվա ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատվելուց հետո տեղադրվել է դպրոցի կայքում: Այստեղ տեղադրվել են նաև ֆինանսական եռամսյա հաշվետվությունները:

Վստահորեն կարող ենք ասել,որ հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը եղել է հստակ ու թափանցիկ:

Դպրոցը բոլոր տարիներին աշխատել է առանց ֆինանսական խնդիրների,նոր ֆինանսական տարի է մտել առանց պարտքերի:

Ուսուցիչների դրույքաչափը հանրապետական միջինից բարձր է 28000/քսանութ հազար/ դրամով և 108000 դրամի փոխարեն կազմել է մոտ 136200 դրամ:

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ(ներառյալ եկամտահարկը)
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ

. Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր

. Այլ ծախսեր

Հ պետական բյուջեից ստացվող միջոցների մեծ մասը բաժին է ընկնում աշխատավարձերի և համապատասխան հարկերի վճարմանը, ապա կոմունալ ծախսերին:

Դպրոցը հոգում է էլեկտրաէներգիայի, ջրի, գազի խնայողության մասին:

Ստորև ներկայացնում եմ 2023 թ ֆինանսական տարվա նախահաշիվը:

### **Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր**

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքներ ով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով,ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սամանված կարգով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 08.09.2020թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի

ցանկը>> N 28-Ն հրամանով հաստատված հավելվածում ներառված փաստաթղթերն են՝

- 1) Էլեկտրոնային դասամատյաններ
- 2) Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ
- 3) Սովորողի անձնական Էլեկտրոնային գործ
- 4) Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
- 5) Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
- 6) Ավարտական, պետական ավարտական, փոխադրական,

Էքստենսիվությունների և գիտելիքների ստուգման

արձանագրություններ

- 7) Էլեկտրոնային հաստիքացուցակ
- 8) Տարիֆիկացիոն մատյան
- 9) Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ
- 10) Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան

Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ Էլեկտրոնային տարբերակով

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

**Լիազոր մարմինը**՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, դպրոցի գործունեության վերահսկողությունը և

ապահովում նրա բնականոն գործունեությունը:Դպրոցը սերտորեն համագործակցում է մարզպետարանի՝ որպես լիազոր մարմնի հետ և ամենօրյա գործունեությամբ կատարում իր առջև դրված խնդիրները:

Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության **խորհուրդն է**: Տնօրենը, համագործակցելով դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝խորհրդի հետ, արդյունավետ աշխատանք է կատարում ի շահ հաստատության:

2018թ հաստատության խորհուրդը ընտրել է տնօրեն և հաշվետու ժամանակաշրջանում

- Իրականացրել է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն
- Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, նիրքին կարգապահական,այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,
- Տնօրենի ներկայացմամբ քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը,բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,հավանություն է տվել և ներկայացրել համապատասխան լիազոր մարմին,
- Քննարկել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները,
- Իրականացրել է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված,դպրոցի կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:

,ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 77-րդ կետով ամրագրված է. ,Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ

**խորհրդակցական** բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ** յուրաքանչյուր ուսումնական տարվա մանկավարժական խորհուրդի օգոստոսյան առաջին նիստին:

- Ձևավորել է հաստատության մանկավարժական խորհուրդը մեկ տարի ժամանակով,
- Ընտրել է մանկավարժական խորհուրդի նիստերի մշտական քարտուղար և հաստատել իր աշխատակարգը,
- Քննարկել է հանրակրթական պետական չափորոշիչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան,
- Քննարկել է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի հետ կապված հարցերը,
- Քննարկել է առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման հարցերը,
- Քննարկել և տնօրենի հաստատմանն է ներկայացրել հաստատության ուսումնական պլանը,
- Քննարկել է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի արդյունքների ամփոփիչ հաշվետվությունը,



- Զննարկել է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, տնօրենի, առարկայական մեթոդ միավորումների, դասղեկների հաշվետվությունները,
- Զննարկել են հաստատության ներքին աշխատանքային կարգապահական և ներքին կարգապահական կանոնները
- Որոշում է ընդունել
- Դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին,
- Սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու մասին,
- Սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու մասին
- Շրջանավարտներին հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ տալու մասին,
- Զննարկել և հաստատել է <<Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերի վարձավճարների փոխհատուցման>> ծրագրից օգտվող սովորողների ցուցակները՝ պահպանելով սոցիալական արդարության սկզբունքները:

Ղեկավարվելով օգոստոսյան առաջին նիստին մանկավարժական խորհրդի կողմից ընդունված որոշումներով, ելնելով հաստատության կոմպլեկտավորումից և հաստատված ուսումնական պլանից՝ կատարվել է **դասաբաշխում**, կազմվել է ուսումնական պարապմունքների **դասացուցակ**, կանոնակարգվել է դասավանդման աշխատանքների կատարման **ռեժիմը**:

Մանկավարժները համագործակցելով ծնողական խորհրդի հետ մասնակցել են հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը՝ ելնելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջներից:

Համաձայն գործող կարգի մանկավարժական խորհուրդը իր կազմից հաստատության խորհրդի կազմում ունի երկու անդամ:

Դպրոցի աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, նախաձեռնում և կազմակերպում թեմատիկ միջոցառումներ, նպաստում ներքին կարգապահական կանոնների պահպանմանը:

Աշակերտական խորհրդի հետագա ավելի ակտիվ գործունեության համար անչափ կարևորում ենք նրանց կողմից բարձրացվող հարցերի մանրամասն ուսումնասիրությունը և մասնագիտական վերլուծությունը՝ կազմակերպելով տարատեսակ քննարկումներ: Նախատեսում ենք նաև ունենալ հարմարավետ աշակերտի անկյուն:

Դպրոցում աշակերտների կրթության և դաստիարակության գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար անչափ կարևոր է դպրոցի [ծնողական խորհրդի](#) ճիշտ և հետևողական աշխատանքը: Ծնողը ուսուցչի առաջին և կարևորագույն գործընկերն է: Դպրոցի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է ինչպես դպրոցի տնօրենության, այնպես էլ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ՝ մշտապես աջակցելով ուսումնադաստիարակչական և կազմակերպչական տարբեր հարցերում: Հատկապես կարևորում են ծնողների ակտիվ մասնակցությունը <<Դպրոցական կայուն սնունդ>> ծրագրին և մեր ծնողական խորհրդի աջակցությունը:

Կարևորելով դպրոցի խորհրդակցական մարմինների միասնական և փոխկապակցված գործունեությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում՝ որպես դպրոցի տնօրեն՝ պետք է կարողանալ ժամանակին և ճիշտ գնահատել նրանց աշխատանքը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպել տարատեսակ քննարկումներ և սեմինարներ:

## Աշակերտական համակազմ

2022-2023 ուստարվա դպրոցում սովորում է 20 աշակերտ: Դպրոցն ունի բարձր վարկանիշ: Ծնողները կարևորում են դպրոցի բարձր համբավը, կարգապահությունը, գնահատում խստապահանջությունն ու կրթության և դաստիարակության միասնականությունը, որակը, ուսումնական ջերմ և ապահով միջավայրը: Հատուկ ուշադրություն է դարձվում շնորհալի և ստեղծագործող աշակերտներին, նրանց հաջողություններին և՛ դպրոցում, և՛ դպրոցից դուրս:

Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում և մրցանակային տեղեր են զբաղեցնում առարկայական օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում:

Բարձր հիմքերի վրա է դրված ֆիզիկական կուլտուրան և սպորտը՝ հատկապես թեթև ատլետիկան: Ունեցել ենք թե հանրապետական և թե միջազգային մրցաշարերի հաղթողներ և մրցանակակիրներ:

Առաջիկայում նախատեսում ենք դպրոցի կայքում ստեղծել հատուկ բաժին շնորհալի սովորողների և նրանց հաջողությունների մասին պատշաճ տեղեկատվության համար:

## Մանկավարժական համակազմը

« Ոչինչ այնքան ավ չեն հիշում աշակերտները, որքան

իրենց ուսուցիչների սխալները»:

Լավ դպրոցը լավ ուսուցիչն է, չէ որ նա աշխատում է ամենապատասխանատու ինդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն՝ լինելով դպրոցում ամենակարևոր երևույթը, ամենաուսուցանող առարկան, ամանալավ կենդանի օրինակը:

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման կարևորագույն օղակներից մեկը շարունակ ինքնակատարելագործման ձգտող և թիմային աշխատանքի պատրաստ ուսուցիչն է: Ուսուցչի բարդ և պատասխանատու ամենօրյա գործունեությունը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է .

- պայմաններ ստեղծել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության ամենօրյա կատարելագործման համար
- երիտասարդ ուսուցիչների համար կազմակերպել որակյալ և գործուն օգնություն
- դպրոցում մանկավարժական առաջավոր փորձի փոխանակման համար կազմակերպել բաց դասեր, իրականացնել դասալսումներ և այլն
- Շարունակելու ուսուցիչների վերապատրաստումը, նպատակաուղղել համակարգչային գիտելիքների և օտար լեզվի իմացության ամրապնդմանը
- ապահովել ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը
- մանկավարժական գործունեությունը նպատակաուղղել յուրաքանչյուր սովորողի՝ սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային

բարձր արժեքների կարևորության ու նշանակության,  
դրանց կրողը լինելու գիտակցության բարձրացմանը:

Ուսուցիչը պետք է մշտապես սովորեցնի և պահանջի լինել հայրենասեր, գիտակցել սեփական տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, հարգել մարդու իրավունքները, լինել աշխատասեր, անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները:

Դպրոցի բոլոր ուսուցիչները իրենց գործի իսկական նվիրյալներն են՝ համապատասխան մասնագիտական կրթությամբ, պարտաճանաչ և պատասխանատու:

Դպրոցում աշխատում են 12 ուսուցիչ, որոնք բոլորը ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն: Նրանցից՝

- ◆ 1-5 տարի աշխատանքային փորձ- 2 ուսուցիչ
- ◆ 5-10 տարի աշխատանքային փորձ- 3 ուսուցիչ
- ◆ 10-15 տարի աշխատանքային փորձ- 1 ուսուցիչ
- ◆ 15 տարի և ավել աշխատանքային փորձ- 6 ուսուցիչ

Մեկ ուսուցիչ անցել է կամավոր ատեստավորում:

Տաս ուսուցիչ անցել է պարտադիր ատեստավորում:

2023-2028թթ դպրոցի խնդիրն է նպաստել ուսուցիչների տարակարգ ձեռք բերելուն, կամավոր ատեստավորմանը մասնակցելուն:

### **Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ**

Ջրածորի միջնակարգ դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը. համատեղ շաբաթօրյակ, ծառատունկ,

տոնակատարություններ, հանդիպումներ համայնքի ղեկավարի հետ: Համայնքի ներկայացուցիչներ հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միոցառումներին, մասնավորապես ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր անցկացնելիս:

Դպրոցը, 2021թ-ին համագործակցելով համայնքի, <<Ֆերտի>> բարեգործական կենտրոնի՝ որպես նվիրաբերող, ՀՀ ԿԳՄՍՆ <<Թիվ 4 արհեստագործական ուսումնարան>> ՊՈԱԿ-ի հետ՝ որպես <<Ուսանողական նախաձեռնությունների կազմակերպիչ>>, ՄԱԶԾ ԳԷՀ ՓԴԾ ֆինանսավորմամբ իրականացվող <<Ցածր ածխածնային էներգիայի ուսումնական կենտրոնների հիմնում երիտասարդ մասնագետների համար>> ծրագրի շրջանակներում իրականացրեց 5կվտ անվանական հզորությամբ ֆոտովոլտային համակարգի կառուցման ծրագիրը՝ ընդհանուր 2373000/երկու միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար/ դրամ նախահաշվային արժեքով, որից 200000/երկու հարյուր հազար/ դրամը ներդրեց համայնքը և 170000/ հարյուր յոթանասուն հազար/ դրամը դպրոցը:

Այս համագործակցության արդյունքում շոշափելի ֆինանսական բեռ թեթևացավ քանի որ դպրոցի ջեռուցումը ամբողջությամբ իրականացվում է Էլեկտրական էներգիաով: Նախատեսվում ենք զարգացնել համագործակցությունը և ապագայում ավելացնել կայանի հզորությունը ևս գոնե 5կվտ-ով, որը համարյա կլուծի դպրոցի ջեռուցման խնդիրը:

## Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Այն դպրոցում սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և ցույց տալիս ուսումնական գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Դպրոցն ունի գեղեցիկ հանդիսությունների դահլիճ, այն վերանորոգված է, բայց ունի կահավորման կարիք, համակարգչային լսարան, բնագիտական առարկաների լաբորատորիա, որը սակայն ունի տեխնիկական վերազինման, լաբորատոր գույքի և սարքավորումների խիստ կարիք:

Կրթական և ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության, ինչպես նաև սովորողների շրջանում հետաքրքրության բարձրացման նպատակով նախատեսում ենք կազմակերպել բազմաբովանդակ հանդիպումներ գիտության, արվեստի, սպորտի և այլ ոլորտների ներկայացուցիչների և աշակերտների, ինչու չէ՞ նաև ծնողների և մանկավարժների շրջանում, անցկացնել բաց դասեր, կլոր սեղաններ, սեմինարներ:

Կարևորագույն հարցերից մեկը դպրոցում պետք է լինի երեխաների առողջության պահպանումը: Այս նպատակով կարևորում ենք սովորողների շրջանում պարբերաբար կազմակերպել տարատեսակ միջոցառումներ, հանդիպումներ, դասախոսություններ անառողջ սովորությունների վնասակարության թեմայով:

Դպրոցում առկա է բուժսենյակ՝ անհրաժեշտ դեղորայքով:

Աշակերտների բացակայությունները պետք է խստորեն վերահսկվեն, ճշտվեն պատճառները, բացառվեն անհարկի բացակայությունները: Անհրաժեշտության դեպքում Առողջապահության նախարարության համապատասխան հրամանի համաձայն՝ դասարանները օպերատիվ կերպով կարող են անցնել առցանց ուսուցման՝ ըստ կարգի:

Դպրոցում խստորեն պահպանվում են սանիտարահիգիենիկ պահանջները, կատարվում է ամենօրյա ախտահանում:

Դպրոցում պետք է տարվի ամենօրյա հետևողական աշխատանք՝ Բոլորի համար հաճելի մթնոլորտ ստեղծելու բարդ գործը

իրականացնելու համար: Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ ճիշտ շփվելու մշակույթ, իսկ դա պետք է անել սեփական օրինակով: Դպրոցի տնօրենի կարևորագույն խնդիրներից մեկը բարոյահոգեբանական ճիշտ մթնոլորտի ձևավորումն ու պահպանումն է թե՛ մանկավարժների, թե՛ ուսումնական հաստատության մյուս աշխատակիցների շրջանակում:

Երեխաները և նրանց ծնողները պետք է համոզված լինեն, որ դպրոցում երեխաները ապահով են, պաշտպանված, մշտապես ուշադրության կենտրոնում:



Ճիշտ կրթական միջավայրի ապահովման գլխավոր գրավականներից մեկը բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտի ապահովումն է:

### Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Դպրոցի գործունեության գերնպատակը սովորողների կրթության որակի բարձրացումն է, դրա համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին:

Պետք է ամենօրյա համալիր աշխատանք իրականացնել ուսման որակը և սովորողների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Դպրոցի մեթոդիավորումները պետք է վերահսկեն ուսումնական պլանների կատարումը, դասի պլանների՝ կրթության պետական նոր չափորոշիչներին համապատասխանելը, դասավանդման որակը, տնային աշխատանքների ծավալը և արդյունավետությունը, կատարեն վերլուծություններ: Նախատեսում ենք անցկացնել աշակերտներին դրվող օբյեկտիվ գնահատականների ստուգմանն ուղղված միջոցառումներ՝ համադպրոցական գրավոր աշխատանքներ, պարբերաբար անցկացվող գիտելիքի ստուգումներ, դասալսումներ՝ արդյունքները համեմատելով ընթացիկ գնահատականների հետ, քննարկելով մեթոդիավորումների նիստերում:

Պետք է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսուցիչների՝ գիտելիքների փոխանցման և գնահատման ձևերին ու մեթոդներին, յուրաքանչյուր երեխային ցուցաբերվող առանձնահատուկ մոտեցումներին, էլեկտրոնային մատյանների ճիշտ և ժամանակին լրացմանը:

Կրթության որակի վերահսկման և սովորողների ուսումնառության որակի բարձրացման գործում կարևորում ենք համագործակցությունը ծնողական համայնքի հետ: Համոզված ենք, որ դպրոց-ուսուցիչ-աշակերտ-ծնող միասնությունը կարող է ապահովել անհրաժեշտ կրթական որակ և արդյունք:

Ուսումնասիրելով անցած տարիներին կատարված աշխատանքը և արդյունքը, ներկայացնեմ աղյուսակի տեսքով տեղեկատվություն Ջրածորի միջնակարգ դպրոցից **ԲՈՒՀ-եր ընդունված աշակերտների** վերաբերյալ.

| <i><b>Ուս տարի</b></i> | <i><b>Շրջանա<br/>վարտների<br/>թիվ</b></i> | <i><b>ԲՈՒՀ<br/>ընդունվող<br/>ների թիվ</b></i> | <i><b>տոկոս</b></i> | <i><b>նշումներ</b></i> |
|------------------------|-------------------------------------------|-----------------------------------------------|---------------------|------------------------|
| <b>2018-2019</b>       | <b>4</b>                                  | <b>3</b>                                      | <b>75</b>           |                        |
| <b>2019-2020</b>       | <b>3</b>                                  | <b>3</b>                                      | <b>100</b>          |                        |
| <b>2020-2021</b>       | <b>1</b>                                  | <b>1</b>                                      | <b>100</b>          |                        |
| <b>2021-2022</b>       | <b>4</b>                                  | <b>4</b>                                      | <b>100</b>          |                        |
| <b>2022-2023</b>       | <b>1</b>                                  | <b>1</b>                                      | <b>100</b>          |                        |

Վստահորեն կարող ենք ասել, որ Ջրածորի միջնակարգ դպրոցը, իր առաքելությանը համապատասխան, ապահովել է սովորողների կրթական կարիքները՝ նրանց տալով իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան գիտելիք՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու համար, նպաստելով **ուսուցման և ուսումնառության շարունակական բարելավմանը**:

Կրթության բովանդակային բաղադրիչներն են.

- գիտելիքների համակարգ

- կարողություններ և հմտություններ
- արժեքային համակարգ
- Դիրքորոշում

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվում գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման քառակենտրոն համակարգի՝ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, դիրքորոշում և խնդիր է դրվել սովորեցնելու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները:

Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, պահպանողը և հետագա սերունդներին փոխանցողը:

## Տեխնոլոգիաներ և նորարարություններ

Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց ՏՀՏ կիրառության: Դրանք յուրաքանչյուր օր օգտագործում են թե՛ դպրոցի տնօրենությունը, թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները և նրանց ծնողները: Կիրառվում են էլեկտրոնային դասամատյաններ և օրագրեր, դպրոցում կիրառվող մատենագրությունը աստիճանաբար թղթայինից անցում է կատարում էլեկտրոնայինի:

Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը:

Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի նորարարական տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է ժամանակ և միջոցներ: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման կարողություններ:

Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար:

Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը: Ցանկալի է, որ յուրաքանչյուր դպրոց, ըստ իր զարգացման ուղղվածության առաջնահերթությունների, ներ

դնի գիտականորեն հիմնված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Սա հնարավորություն կտա հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուսներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքը:

- 2023-2028թթ. աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու համար նպատակային ձևով մշտապես օգտվել ներքոհիշյալ կայքերից՝ միաժամանակ դառնալով և՛ մասնակից, և՛ կատարող.

**Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպություն** <https://www.ktak.am/>

Կազմակերպության շնորհիվ ապահովվում է հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականությունը, հանրակրթական դպրոցները ժամանակակից համակարգչային սարքավորումներով համալրելը. հանրակրթական դպրոցների միջև համընդհանուր համակարգչային ցանցի ներդնումը. հանրակրթական դպրոցներում ինտերնետային կապի ներդնումը, հանրակրթական դպրոցներում համակարգչային ուսումնական կենտրոնների ստեղծումը, կրթական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների բնագավառի բոլոր ծրագրերի կոորդինացումը, ուսուցիչների համակարգչային գրագիտության բարձրացման նպատակով, նրանց վերապատրաստումը, հանրակրթական դպրոցների ինտերնետային համալիր էջի ստեղծումը և դրա շահագործումը, համակարգչային ուսումնական նյութերի և ծրագրային փաթեթների մշակումը, հրատարակումը, և տրամադրումը հանրակրթական դպրոցներին, համակարգիչների վարձակալության գործընթացի և շրջանառու հիմնադրամի կառավարումը, կրթական տեղեկատվական և հաղորդակցման միջավայրի ստեղծումը՝ համակարգչային համընդհանուր ցանցում աստիճանաբար ներառելով միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական կազմակերպությունները:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ** <https://kznakhimnadram.blogspot.com/>

Հիմնադրամի նպատակն է՝ խթանել կրթության ոլորտի զարգացումը և արդիականացումը՝ ի նպաստ սովորողների որակյալ կրթության

ապահովմանը, առողջության և սոցիալական պաշտպանվածության բարելավմանը, մրցունակ անձի ձևավորմանը և ինքնիրացման աստիճանի բարձրացմանը, կրթական մասնագիտական ներուժի զարգացմանը:

**<<Հայկական կրթական միջավայր>> պորտալ՝**

<http://www.armedu.am/>

- Պորտալի <<Տեղեկատվություն>> բաժնում (մասնավորապես՝ <<Նորություններ>> և <<Հայտարարություններ>> ենթաբաժիններ)
- տրամադրվում է համակողմանի տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի գործունեության և կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի մասին,
  - տեղադրվում են միջազգային և տեղական կազմակերպությունների տրամադրած, հայտարարություններն ու մամուլ հաղորդագրությունները կազմակերպվող տարբեր մրցույթների, աշխատանքային հանդիպումների, դասընթացների, համաժողովների, թափուր աշխատատեղերի մասին,
  - ներկայացվում են ուսումնական հաստատություններում անցկացված տարաբնույթ կրթական և մշակութային միջոցառումների մասին պատմող նյութեր, լուսանկարներ, տեսահոլովակներ:

**<<Պաշարների շտեմարան>> կայք. <http://lib.armedu.am>**

Շտեմարանում պաշարների ընդհանուր քանակը գերազանցում է 3800-ը, իսկ գրանցված օգտագործողների թիվը՝ 2450-ը: Կայքում ուսուցիչների, աշակերտների և կրթության ոլորտի մասնագետների համար ըստ դասակարգված բաժինների տեղադրվում են կրթական, ուսումնամեթոդական էլեկտրոնային պաշարներ, մասնավորապես.

- Հանրակրթական դպրոցի գործող և փորձարկվող դասագրքերի (այդ թվում ազգային փոքրամասնությունների), ուսուցչի և այլ ուսումնական ձեռնարկների էլեկտրոնային տարբերակներ,
- միասնական և ավարտական քննությունների փաստաթղթեր, առաջադրանքներ ու պատասխաններ, առարկայական շտեմարաններ, դիմորդի տեղեկատուներ,
- դպրոցականների առարկայական, համահայկական և այլ օլիմպիադաների փաստաթղթեր, մասնակիցների ցուցակներ ու արդյունքներ, առաջադրանքներ ու պատասխաններ,
- ուսուցիչների և համապատասխան մասնագետների մշակած մեթոդական նյութեր (առարկայական թեմատիկ պլաններ ու ծրագրեր, դասերի ու միջոցառումների պլաններ և այլն), հոդվածներ, ուսումնական և ցուցադրական աշխատանքներ:

## 6. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը,

| Ուժեղ կողմեր                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Թույլ կողմեր                                                                                                                                                  |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1.Աշխատակազմի գործունեություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |                                                                                                                                                               |
| <p>Վարչական կազմ</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում</li> <li>➤ կառավարման ժողովրդավարական ոճ</li> <li>➤ կադրային ճիշտ քաղաքականություն</li> <li>➤ բարձր կարգապահություն և պատասխանատվություն</li> <li>➤ բոլոր օղակների աշխատանքի համակարգվածություն և վերահսկողություն</li> <li>➤ մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>➤ Կապված բյուջետային հնարավորություններից դպրոցի տնօրենի համապատասխան տեղակալների հաստիքների բացակայություն</li> </ul> |

| 2. Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                          |
